

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Ի՞ՆՉ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ
ԵՐԵԽԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ: ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԴՐԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԵՍՐՈՊ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ I ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ	6
§ 1. Ընտանիքի դերը հասարակության մեջ և երեխայի կյանքում	6
§ 2. Ընտանեկան կոնֆլիկտների հասկացությունը և առանձնահատկությունները	8
§ 3. Կոնֆլիկտները երեխաների և ծնողների միջև	11
ԳԼՈՒԽ II ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	14
§ 1. Ընտանեկան կոնֆլիկտների կանխարգելումը	14
§ 2. Ընտանեկան կոնֆլիկտների լուծումը	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	20
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	22

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Կոնֆլիկտների էությունը կարող է սահմանվել որպես երկու կամ ավելի կողմերի (առանձին անհատների կամ խմբերի) միջև համաձայնության բացակայություն: Կոնֆլիկտում ներգրավված կողմերից յուրաքանչյուրն անում է ամեն ինչ, որպեսզի ընդունվի իր տեսակետը կամ նպատակը և թույլ չտա մյուս կողմին անել նույնը, հետևաբար՝ այն կապված է ագրեսիայի, սպառնալիքների, վեճերի, թշնամանքի, լարվածության և այլ հուզական բացասականության հետ: Ցանկացած կոնֆլիկտ միշտ անցանկալի է, և պետք է անհապաղ լուծել, քանի որ այն քայքայում է մարդկային հարաբերությունները և բացասաբար է անդրադառնում հակամարտող անձանց սոցիալական և հոգեկան առողջության վրա:

Ընտանեկան կոնֆլիկտները կոնֆլիկտի ամենատարածված ձևերից են: Ըստ մասնագետների՝ ընտանիքների 80-85%-ի մոտ պարտադիր լինում են կոնֆլիկտներ, իսկ մնացած դեպքերում՝ տարբեր առիթներով վեճեր:

Ընտանեկան կոնֆլիկտների կանխարգելումը և լուծումը պայմանավորված է դրանց էությունը վերլուծելու անհրաժեշտությամբ: Ընտանիքը անհատի սոցիալականացման, մշակութային, էթնիկական և բարոյական արժեքների փոխանցման կարևորագույն գործիքներից է: Ընտանիքը մարդու համար առաջնային նշանակություն ունի, և ընտանիքի բարեկեցությունը կախված է նրանից, թե ինչպես է այն զարգանում, ինչ դեր են խաղում դրանում կոնֆլիկտները, և ինչպես են դրանք լուծվում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի համար: Դա կախված է հենց նրանցից յուրաքանչյուրի՝ ինքն իրեն կառավարելու և փոխզիջումների գնալու կարողությունից: Սրանք բնածին կարողություններ չեն, այլ ձեռք են բերվում մարդու՝ իր վրա աշխատելու և, իհարկե, կրթության արդյունքում:

Ընտանիքի ձևավորման տարբեր փուլերում տարբեր տեսակի կոնֆլիկտներ ունեն իրենց առանձնահատկությունները, փուլերը, դինամիկան, լուծման առանձնահատկությունները: Ընտանեկան կոնֆլիկտների կանխարգելումն ու լուծումը կախված է ոչ միայն կոնֆլիկտի կողմերից, այլ նաև ընտանիքի բոլոր մյուս անդամներից:

Չեռազոտվող թեմայի արդիականությունը: Կոնֆլիկտների խնդիրը դեռահասների զարգացման և դաստիարակության մեջ ամենաբարդ և սուր խնդիրներից է: Դեռահասները սկսում են դիմակայել մեծահասակների պահանջներին, որոնք ավելի վաղ տարիքում կատարում էին առանց դժկամության,

սկսում են ավելի ակտիվորեն պաշտպանել անկախության իրենց ձգտումը: Նրանք առավել զգայուն են արձագանքում իրենց իրավունքների իրական կամ ենթադրյալ խախտումներին: Բացի այդ, «մեծանալու» ձգտման ազդեցությամբ փորձում են սահմանափակել մեծահասակների վերահսկողությունը իրենց նկատմամբ:

Այն դեպքերում, երբ ծնողները դեռահասներին վերաբերվում են ինչպես փոքր երեխաների, նրանք տարբեր դրսևորումներով անհնազանդություն են ցուցաբերում: Արդյունքում, կոնֆլիկտներ են առաջանում դեռահասների և մեծահասակների միջև, առավել հաճախ՝ նրանց ծնողների հետ:

Պատճառներից մեկը ծնողների ավտորիտար վարքագիծն է: Երեխայի կրթության նկատմամբ բավարար ուշադրությունը և խրախուսանքը սովորաբար հանգեցնում են ներդաշնակ զարգացող անհատականության ձևավորմանը, մինչդեռ խստությունն ու պատժի միջոցների կիրառումը բերում են թերի և կոմպլեքսավորված անհատականության ձևավորման: Երեխայի ինքնագնահատականի, այլ մարդկանց հետ նրա լավ հարաբերությունների, իր մասին դրական պատկերացումների համար առանցքային կարևորություն ունի ծնողական սերը և ընտանիքում ստացած ջերմությունը: Դրա բացակայությունը հանգեցնում է նյարդային և հոգեկան խանգարումների, առաջացնում է թշնամանք և ազդեցիվություն այլ մարդկանց նկատմամբ:

Ջետազոտության օբյեկտը և առարկան: Ջետազոտության օբյեկտը ընտանեկան կոնֆլիկտներն են երեխայի և մեծահասակների միջև:

Ջետազոտության առարկան են երեխայի և մեծահասակների միջև ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները, դրանց հոգեբանական կողմը և կանխարգելման ու լուծման ճանապարհները:

Ջետազոտական աշխատանքի նպատակներն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների առաջացման գործոնները, դրանց ազդեցությունը ընտանիքի անդամների հոգեկան առողջության վրա և բացահայտել կոնֆլիկտների կանխարգելման ու լուծման եղանակները: Այս նպատակներին հետամուտ՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ✓ հանգամանալից վերլուծության ենթարկել ընտանեկան կոնֆլիկտները, դրանց նպաստող գործոնները և առաջացման հիմնական պատճառները,
- ✓ ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների լուծման և կանխարգելման առանձնահատկությունները:

Յետագոտության թեմայի տեսական և գործնական

նշանակությունը: Յետագոտության առարկայի առավել խորը ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ տեսական հայեցակարգերի հետագա գիտական զարգացման և հիմնավորվածության բարձրացման համար:

Միաժամանակ, ծնողների և դեռահասների միջև առաջացող կոնֆլիկտների հետ աշխատելիս հետագոտության արդյունքում ձեռք բերված գիտելիքները կարող են կիրառվել կանխարգելիչ նպատակներով: Մասնավորապես, պատճառների իմացությունը կօգնի կառուցողական մոտեցում ցուցաբերել դեռահասների և ծնողների միջև կոնֆլիկտները լուծելիս:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք ներառում են հինգ պարագրաֆներ, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ I

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿՐԱ

§ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Ընտանիքը մարդկային փոխազդեցության եզակի ինստիտուտ է: Այս եզակիությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդկանց այս ամենամոտ միությունը կապված է բարոյական պարտավորություններով:

Ընտանիքը բնութագրվում է որպես փոքր սոցիալական խումբ, որը կապված է ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, ընդհանուր կյանքի և երեխաների ապահովման ու դաստիարակության համար ամուսինների փոխադարձ պատասխանատվությամբ:

Ընտանիքը ստեղծում կամ ոչնչացնում է անհատականությունը: Ընտանիքի ուժն է ամրապնդել կամ խաթարել իր անդամների հոգեկան առողջությունը: Այն ձևավորում է անձի ինդիվիդուալության սահմանները, նպաստում է անձի «ես»-ի առաջացմանը: Դա մեծապես կախված է նրանից, թե ընտանիքում ինչպես են կառուցվում հարաբերությունները, ինչ արժեքներ, հետաքրքրություններ են առաջ քաշում ընտանիքի ավագ ներկայացուցիչները: Երեխան շատ զգայուն է մեծահասակների վարքագծի նկատմամբ և արագ է սովորում ընտանեկան դաստիարակության գործընթացում քաղած դասերը: Խնդրահարույց ընտանիքից երեխային վերադաստիարակելը գրեթե անհնար է, քանի որ վերջինս արդեն իսկ յուրացրել է որոշակի կանոններ, և հասարակությունը վճարելու է դաստիարակության մեջ նման բացերի համար: Ընտանիքը երեխային նախապատրաստում է կյանքին, հանդիսանում է նրա սոցիալական իդեալների առաջին և ամենախորը աղբյուրը և հիմք է դնում նրա քաղաքացիական վարքագծի համար:

Երեխաների վրա ամենաուժեղ ազդեցությունն ունեն ծնողները՝ առաջին դաստիարակները: Ժ.Ժ.Ռուսոն պնդում էր, որ յուրաքանչյուր հաջորդ ուսուցիչ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը: Ծնողները առաջ են բուլորից՝ մանկապարտեզի ուսուցչից, տարրական դասարանի ուսուցչից, առարկայական ուսուցիչներից և այլն: Հենց նրանց է բնության կողմից առավելություն տրված երեխաների դաստիարակության գործում: Ընտանեկան կրթության ապահովումը,

դրա բովանդակային և կազմակերպչական ասպեկտները նրանց հավերժական և շատ պատասխանատու խնդիրն են:

Ծնողների հետ խորը շփումները երեխաների մեջ ստեղծում են կայունության, վստահության և հուսալիության զգացում:

Ծնողների և երեխաների հարաբերությունների խնդիրը երբեմն խճճված և պարադոքսալ է: Դրա բարդությունը մարդկային հարաբերությունների թաքնված բնույթի, դրանց մեջ «արտաքին» ներթափանցման անհնարիկության մեջ է: Իսկ պարադոքսն այն է, որ իր ողջ կարևորությամբ ծնողները սովորաբար դա չեն նկատում, քանի որ չունեն դրա համար անհրաժեշտ հոգեբանական և մանկավարժական տեղեկացվածություն:

Ծնողները, որպես կանոն, չեն տեսնում ո՛չ իրենց և իրենց երեխաների հարաբերությունների զարգացման ընթացքը, ո՛չ դրանց օրինաչափությունն ու տրամաբանությունը, և սկսում են ահազանգել միայն տազնապալի կոնֆլիկտային իրավիճակ ստեղծվելուց հետո: Մինչդեռ ծնողների և երեխաների հարաբերություններում կոնֆլիկտը հազվադեպ է պատահական և հանկարծակի առաջանում:

§ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՏՐԻԿՏՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առողջ ընտանիքներում ծնողներն ու երեխաները կապված են բնական առօրյա շփումներով: Սա նրանց միջև այնքան սերտ շփում է, որի արդյունքում առաջանում է հոգևոր միասնություն, հետևողականություն կյանքի ձգտումների և գործողությունների նկատմամբ: Նման հարաբերությունների բնական հիմքը ընտանեկան կապերն են, մայրության և հայրության զգացումները, որոնք դրսևորվում են ծնողական սիրով և միմյանց հանդեպ հոգատարությամբ:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում, երբ ընտանիքը խնդրահարույց է լինում: Այդպիսի ընտանիքների սոցիալական դերը երեխայի կյանքում, կախված ներքին խնդիրներից, հանգեցնում է երեխայի բնականոն զարգացման, դաստիարակության և կրթման տարաբնույթ շեղումների: Կոնֆլիկտային ընտանիքները լինում են ճգնաժամային, կոնֆլիկտային, պրոբլեմատիկ և ներոտիկ:

Ճգնաժամային ընտանիք. Ամուսինների շահերի և կարիքների միջև առճակատումը սուր է և զբաղեցնում է ընտանեկան կյանքի կարևոր ոլորտները: Ամուսինները միմյանց նկատմամբ անհաշտ և նույնիսկ թշնամական դիրքեր են ընդունում՝ չհամաձայնելով որևէ փոխզիջման: Ճգնաժամային ընտանիքներ ներկայացնում են ամուսնությունները, որոնք կա՛մ փլուզվում են, կա՛մ փլուզման եզրին են:

Կոնֆլիկտային ընտանիք. Ամուսինների միջև անընդհատ առկա են հիմնախնդիրներ, որտեղ նրանց շահերը բախվում են, ինչը հանգեցնում է ուժեղ և երկարատև բացասական հուզական վիճակների: Այնուամենայնիվ, ամուսնությունը կարող է պահպանվել այլ գործոնների պատճառով, ինչպիսիք են փոխզիջումները և կոնֆլիկտների լուծումը երկխոսության ճանապարհով:

Պրոբլեմատիկ ընտանիք. Այն բնութագրվում է դժվարությունների տևական գոյությամբ, որոնք կարող են շոշափելի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Օրինակ՝ բնակարան չունենալը, ամուսիններից մեկի երկարատև հիվանդությունը, ընտանիքի պահպանման համար միջոցների բացակայությունը, հանցագործության համար երկարաժամկետ դատապարտումը և մի շարք այլ խնդիրներ: Նման ընտանիքներում հավանական են հարաբերությունների սրումը, հոգեկան խանգարումների ի հայտ գալը ամուսիններից մեկի կամ երկուսի մոտ:

Նկրտոսիկ ընտանիք. Այստեղ գլխավոր դերը խաղում են ոչ թե որևէ խնդրի հետևանքով ամուսնու մոտ հոգեկան խանգարումը, այլ հոգեբանական դժվարությունների կուտակումը, որոնց ընտանիքը հանդիպում է իր կյանքի ճանապարհին: Ամուսիների մոտ ավելանում է քրոնիկ անհանգստությունը, քնի խանգարումը, զգայունությունը, ագրեսիվությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտները ընտանիքի անդամների միջև առճակատումներ են, որոնք հիմնված են հակառակ շարժառիթների և/կամ տեսակետների բախման վրա:

Ընտանեկան կոնֆլիկտներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնել այդ կոնֆլիկտները կանխելիս և լուծելիս:

Ընտանեկան կոնֆլիկտները տարբերվում են առարկայով, որի յուրահատկությունը պայմանավորված է ընտանեկան հարաբերություններին բնորոշ հատկանիշներով: Ընտանեկան հարաբերությունների կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանց հիմնական բովանդակությունը և՛ միջանձնային հարաբերություններն են (արյունակցական և ամուսնական հարաբերություններ), և՛ բարոյական և իրավական պարտավորությունները, որոնք կապված են ընտանեկան գործառույթների իրականացման հետ (վերարտադրողական, կրթական, տնտեսական, առողջության պահպանման, հանգստի կազմակերպման և այլն):

Ընտանեկան կոնֆլիկտները առանձնանում են նաև դրանց առաջացման պատճառներով: Կարևորներից են՝

- Ընտանիքի անդամների գործունեության, ինքնարտահայտման և գործողությունների ազատության սահմանափակում,
- Ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների շեղված վարքագիծ (թմրամոլություն, ալկոհոլիզմ և այլն),
- Չակասող նկրտումների, շահերի, ընտանիքի անդամներից մեկի կարիքները բավարարելու սահմանափակ հնարավորությունների առկայություն (նրա տեսանկյունից),
- Ընդհանրապես ընտանիքում ձևավորված ավտորիտար, կոշտ հարաբերություններ,
- Անլուծելի նյութական խնդիրների առկայություն,
- Չարագատների ավտորիտար ներխուժումը ամուսնական հարաբերությունների մեջ,
- Ամուսնության մեջ զուգընկերների սեռական աններդաշնակություն, և այլն:

Վերլուծելով ընտանեկան կոնֆլիկտների պատճառները՝ անհրաժեշտ է հաշվի առնել մի կրոն և մակրո միջավայրի սոցիալական գործոնները: Մի կրոն միջավայրի գործոններն են ընտանիքի ֆինանսական վիճակի վատթարացումը, ամուսինների կամ ընտանիքի այլ անդամների նորմալ աշխատանքի անհնարինությունը, աշխատանքի վայրում ամուսիններից մեկի կամ երկուսի չափից ավելի զբաղվածությունը, երեխաներին մանկապարտեզում կազմակերպելու հնարավորության բացակայությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկություններն արտահայտվում են դրանց դինամիկայով, ինչպես նաև ընթացքով և հանգուցալուծմամբ: Ընդհանուր առմամբ, ընտանեկան կոնֆլիկտների դինամիկան բնութագրվում է դասական փուլերով՝ կոնֆլիկտային իրավիճակի առաջացում, կոնֆլիկտային իրավիճակի իրազեկում, բաց առճակատում, բաց առճակատման զարգացում, կոնֆլիկտի լուծում և կոնֆլիկտի հուզական փորձ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր կոնֆլիկտ առանձնանում է հուզականության աստիճանով, փուլերից որևէ մեկի արագությամբ, առճակատման ձևերով (կշտամբանքներ, վեճեր, վիրավորանքներ, հաղորդակցության խաթարում, ընտանեկան սկանդալ և այլն), ինչպես նաև դրանց լուծման ուղիներով (հաշտեցում, փոխադարձ զիջումներ կամ կոշտ հարաբերություններ, ամուսնալուծություն և այլն):

Ընտանեկան կոնֆլիկտների ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք ունենում են ծանր, հաճախ՝ ողբերգական սոցիալական հետևանքներ: Ոչ հազվադեպ դրանք հանգեցնում են ընտանիքի անդամների տարբեր հիվանդությունների:

Չատկապես ծանր հետևանքներ ընտանեկան կոնֆլիկտները ունենում են երեխաների համար:

§ 3. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ըստ ընտանեկան հարաբերությունների սուբյեկտների՝ տարանջատվում են ընտանեկան կոնֆլիկտներ՝

- ամուսինների միջև,
- ծնողների և երեխաների միջև,
- ամուսիններից մեկի և մյուս ամուսնու ծնողի/ծնողների միջև,
- տատիկների/պապիկների և թոռների միջև:

Սույն աշխատությունը հետազոտության առարկա է դարձնում ծնողների և երեխաների միջև ծագող կոնֆլիկտների առանձնահատկությունները, պատճառները, դրանց նպաստող գործոնները: Այս տեսակի կոնֆլիկտը առօրյա կյանքում ամենատարածվածներից է: Այնուամենայնիվ, այն որոշ չափով անտեսված և հեռացված է հոգեբանների և ուսուցիչների ուշադրությունից: Տարաբնույթ կոնֆլիկտների վերաբերյալ ավելի քան 700 հոգեբանական և մանկավարժական աշխատություններից մեկ-երկու տասնյակ հրապարակումներ հազիվ թե գտնվեն, որոնց կենտրոնում կլինի ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտների խնդիրը: Այնուամենայնիվ, ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտի խնդիրը կարող է լինել ոչ միայն ծնողների, այլև երեխաների միջև կոնֆլիկտների առաջացման պատճառ: Այն սովորաբար ուսումնասիրվում է ավելի լայնածավալ հետազոտությունների համատեքստում, օրինակ՝ ընտանեկան հարաբերություններ, տարիքային ճգնաժամեր, ամուսնական կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների զարգացման վրա և այլն: Այնուամենայնիվ, անհնար է գտնել այնպիսի ընտանիք, որտեղ ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտներ չլինեն: Նույնիսկ ապահովված ընտանիքներում դեպքերի ավելի քան 30%-ում նկատվում են դեռահասի տեսանկյունից կոնֆլիկտային հարաբերություններ երկու ծնողների հետ: Դպրոցի ուսուցիչների անանուն հարցումները ցույց են տալիս, որ նրանցից յուրաքանչյուր երրորդը կոնֆլիկտային հարաբերություններ է ունեցել սեփական երեխաների հետ:

Իսկ ինչու՞ են ծագում կոնֆլիկտները ծնողների և երեխաների միջև:

Մարդկանց հարաբերություններում կոնֆլիկտ առաջացնող վերը քննարկված ընդհանուր պատճառներից բացի, ծնողների և երեխաների փոխազդեցության մեջ կան կոնֆլիկտի հոգեբանական գործոններ, որոնցից մի քանիսին անդրադառնում ենք ստորև.

Ներընտանեկան հարաբերությունների բնույթը. Տարանջատվում են ներդաշնակ և աններդաշնակ ներընտանեկան հարաբերություններ: Ներդաշնակ ընտանիքում հաստատվում է հավասարակշռություն, որը դրսևորվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի հոգեբանական դերերի ձևավորմամբ, ընտանիքում «մենք»-ի հայեցակարգի ընկալմամբ և ամրապնդմամբ, ընտանիքի անդամների՝ հակասությունները լուծելու ունակությամբ:

Ընտանեկան աններդաշնակությունը ամուսնական հարաբերությունների բացասական բնույթն է, որն արտահայտվում է ամուսինների կոնֆլիկտային փոխազդեցության մեջ: Նման ընտանիքում հոգեբանական լարվածության և սթրեսի մակարդակը աճելու միտում ունի, ինչը հանգեցնում է նրա անդամների ներուժի ռեակցիաների, երեխաների մոտ մշտական անհանգստության զգացողության առաջացմանը:

Ընտանեկան դաստիարակության կործանարարությունը. Առանձնացվում են դաստիարակության կործանարար բնույթի հետևյալ հատկանիշները.

- ✓ ընտանիքի անդամների տարածայնությունները դաստիարակության հարցերում,
- ✓ ընտանիքի անդամների հակասական, անհետևողական և ոչ ադեկվատ վարքագիծ,
- ✓ խստապահանջություն և արգելքներ երեխայի կյանքի տարբեր ոլորտներում,
- ✓ երեխայի նկատմամբ պահանջների ավելացում, սպառնալիքների հաճախակի կիրառում, պատժի միջոցների գործադրում:

Երեխայի տարիքային ճգնաժամերը. Տարիքային ճգնաժամը երեխայի զարգացման մի փուլից մյուսը անցումային շրջան է: Այն շրջանում երեխաները դառնում են չարաճճի, քմահաճ, դյուրագրգիռ: Նրանք հաճախ հակասության մեջ են մտնում ուրիշների, հատկապես՝ ծնողների հետ: Բացասական են վերաբերվում նախկինում ինքնակամ կատարված պահանջներին՝ համառության ցուցաբերելով: Երեխաների տարիքային ճգնաժամերը ունեն հետևյալ փուլերը.

- 1 տարեկան՝ անցում նորածնային տարիքից դեպի վաղ մանկություն,
- 3 տարեկան՝ անցում վաղ մանկությունից դեպի նախադպրոցական տարիք,
- 6-7 տարեկան՝ անցում նախադպրոցական տարիքից տարրական դպրոցական տարիքի,

- 12-14 տարեկան՝ անցում դեպի պատանեկության (սեռական հասունացման ճգնաժամ),
- 15-17 տարեկան՝ անցում պատանեկությունից դեպի դեռահասության:

Առանձնացվում են ծնողների և երեխայի միջև հարաբերությունների հետևյալ տեսակները.

1. ծնող-երեխա հարաբերությունները օպտիմալ են,
2. ոչ միշտ կա անհրաժեշտությունը, բայց ծնողները խորանում են երեխայի շահերի մեջ, և երեխան կիսում է իր մտքերը նրանց հետ,
3. ծնողներն ավելի հաճախ են խորանում երեխայի հոգսերի և մտահոգությունների մեջ, քան երեխան կիսում է նրանց հետ. արդյունքում առաջանում է փոխադարձ դժգոհություն,
4. երեխան ցանկություն է ունենում կիսվելու ծնողների հետ ավելի շատ, քան ծնողները խորանում են նրա հոգսերի, հետաքրքրությունների և զբաղմունքների մեջ,
5. երեխայի վարքագիծը, կյանքի ձգտումները ընտանիքում կոնֆլիկտներ են առաջացնում, և ծնողներն, ավելի հավանական է, որ ճիշտ լինեն,
6. երեխայի վարքագիծը, կյանքի ձգտումները ընտանիքում կոնֆլիկտներ են առաջացնում, և երեխաները, ավելի հավանական է, որ ճիշտ լինեն.
7. ծնողները չեն խորանում երեխայի շահերի մեջ, և երեխան ցանկություն է չունի կիսվելու նրանց հետ, այսինքն՝ հակասությունները ծնողների կողմից չեն նկատվում և վերաճում են կոնֆլիկտների, փոխադարձ օտարման:

Ամենից հաճախ ծնողների մոտ կոնֆլիկտներ են ծագում դեռահասների հետ: Հոգեբանները տարանջատում են դեռահասների և ծնողների միջև կոնֆլիկտների հետևյալ տեսակները.

- բախումներ կապված ծնողական անկայուն վերաբերմունքի հետ (երեխային դաստիարակելու չափանիշների մշտական փոփոխություն),
- բախումներ կապված գերխնամքի հետ (չափազանց շատ խնամք և չափազանց մեծ ակնկալիքներ),
- բախումներ կապված երեխայի իրավունքների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հետ (հրահանգներ և վերահսկողություն),
- բախումներ կապված հայրական իշխանության հետ (իր ուզածին ցանկացած գնով հասնելու ցանկություն):

ԳԼՈՒԽ II

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Կոնֆլիկտների կանխարգելումը սոցիալական փոխազդեցության սուբյեկտների կյանքի այնպիսի կազմակերպումն է, որը վերացնում կամ նվազագույնի է հասցնում նրանց միջև կոնֆլիկտների հավանականությունը: Այն նպատակ է հետապնդում ստեղծելու այնպիսի պայմաններ մարդկանց գործունեության և փոխգործակցության համար, որոնց գրեթե կբացառեն նրանց միջև հակասությունների առաջացման կամ կործանարար զարգացման ռիսկերը:

Ելնելով դրանից՝ ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտների կանխարգելման հիմնական ուղղությունները կարող են լինել.

- ✓ ծնողների մանկավարժական կուլտուրայի բարձրացումը, ինչը թույլ կտա հաշվի առնել երեխաների տարիքային հոգեբանական առանձնահատկությունները, նրանց հուզական վիճակները,
- ✓ ընտանիքի միավորումը կուլտիվի հիմունքներով, քանի որ ընդհանուր հեռանկարները, որոշակի փոխադարձ պարտականությունները, փոխօգնության ավանդույթները և ընդհանուր նախասիրությունները ամուր հիմք են հանդիսանում առաջացող հակասությունների բացահայտման և լուծման համար,
- ✓ դաստիարակության գործընթացում ծնողների կողմից իրենց բանավոր պահանջների վերահաստատումը և ամրապնդումը գործնական օրինակներով,
- ✓ ծնողների կողմից հետաքրքրության ցուցաբերումը երեխայի ներաշխարհի, նրա հոգսերի և նախասիրությունների նկատմամբ:

Կոնֆլիկտներից հնարավորին չափ խուսափելու նպատակով երեխաների հետ պետք է խոսել հենց իրենց կյանքի սկզբնական փուլից, պատասխանել նրանց անվերջ հարցերին, քննարկել տեղի ունեցած իրադարձությունները, բացատրել իրենց արարքների հնարավոր հետևանքները և այլն: Խոսելը, պարզաբանելը և երեխաների հարցերին պատասխանելը նպաստում են ծնողների և երեխաների միջև հարաբերությունների դրական կողմի ամրապնդմանը: Սա չի նշանակում, որ ծնողները երբեմն չեն կարող երեխային ասել, որ հոգնած են, զբաղված են կամ այժմ

չեն կարողանա խոսել նրա հետ: Այնուամենայնիվ, կարևոր է տեղյակ լինել երեխաների հետ բանավոր հաղորդակցության առավելությունների մասին: Ծնողները, ովքեր ցանկանում են, որ դեռահասները կյանքի դժվարին պահերին պարփակված չլինեն և իրենց ապրումներով ու փորձով կիսվեն նրանց հետ, պետք է սկսեն շփվել երեխայի հետ այն տարիքից, երբ նա դեռ չի էլ խոսում:

Բացի այդ, ծնողները պետք է հարգեն իրենց երեխաներին, ջանքեր գործադրեն նրանց հետ դրական հարաբերություններ ստեղծելու համար և պարտավորություն ստանձնեն աջակցելու նրանց դառնալ լիարժեք, զարգացած անհատականություն: Ոչ ոք չպետք է աշխատի դրա վրա այնքան ջանասիրաբար և այնքան նվիրումով, որքան ծնողները, և ոչ ոք ի վիճակի չէ նման արժեքավոր և արդյունավետ ներդրում ունենալ երեխայի դաստիարակության գործում: Ընտանիքը պետք է հասկանա երեխային, նրա ցանկություններն ու հետաքրքրությունները՝ համբերատար աջակցելով դրանցից որոշների իրականացմանը և նույնքան համբերատար հետ պահելով նրանց մյուսներից: Կարևոր է, որ այս ճանապարհին ծնողները հնարավորինս անկեղծ լինեն իրենք իրենց և երեխայի հետ:

Ըստ հոգեբաններ Դ. Լաշլիի, Ա. Ռոյակի, Տ. Յուֆերովայի և Ս. Յակոբսոնի՝ երեխաների հետ կոնֆլիկտներից խուսափելու համար ծնողների վարքագիծը պետք է հիմնվի հետևյալ կոնցեպցիաների վրա.

- Միշտ հաշվի առնել երեխայի անհատականությունը և փորձել հասկանալ նրա պահանջները,
- Նկատի ունենալ, որ յուրաքանչյուր նոր իրավիճակ պահանջում է նոր լուծում,
- Ցուցաբերել կայունություն երեխայի նկատմամբ,
- Հաճախ առաջարկել մի քանի այլընտրանքների ընտրություն,
- Համատեղ ելք փնտրել՝ ձգտելով փոխել իրավիճակը,
- Նվազեցնել «անհնարների» թիվը և ավելացնել «հնարավորների» թիվը,
- Պատիժներ կիրառել սահմանափակ՝ պահպանելով դրանց արդարությունն ու իրական անհրաժեշտությունը,
- Երեխային հնարավորություն տալ զգալու իր չարությունների բացասական հետևանքների անխուսափելիությունը,
- Ընդլայնել բարոյական, ոչ թե նյութական խրախուսումների շրջանակը,
- Հաշվի առնել փոքր երեխաներին ազդեցության ենթարկելու դյուրիևությունը:

§ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ընտանեկան կոնֆլիկտների լուծման գործում ամենակարևորներից մեկը խնդիրների բացահայտումն է՝ ըստ դրանց նշանակության և լուծման հրատապության:

Ցանկացած կոնֆլիկտի ժամանակ երկու կողմերն էլ ունենում են խառը էմոցիաներ: Մի կողմից՝ բախման մասնակիցները միմյանց նկատմամբ զգում են զայրույթ, հակակրանք կամ նույնիսկ ատելություն, ցանկանում, որ մյուսը զիջի իր դիրքը, մյուս կողմից՝ փոխըմբռնման և համաձայնության գալու ցանկություն, քանի որ նրանք, այնուամենայնիվ, պահպանում են բարյացակամ զգացմունքներ, որոնք արդյունք են միմյանց միջև հոգեբանական կապի և նախկինում ունեցած հարաբերությունների:

Բերենք ծնողների և երեխայի միջև կոնֆլիկտային իրավիճակի բնորոշ մի օրինակ, որը թերևս բոլորին է հայտնի. ընտանիքը երեկոյան հեռուստացույց է դիտում, բայց բոլորն ուզում են դիտել իրենցը: Օրինակ՝ որդին ֆուտբոլի մոլի երկրպագու է և ակնկալում է դիտել սպասված ֆուտբոլային հանդիպման հեռարձակումը: Մայրիկն իր հերթին լարված սպասում է սիրելի ֆիլմի հաջորդ սերիային: Վեճ է բռնկվում. մայրը չի կարող բաց թողնել սերիալը, նա «ամբողջ օրը դրան է սպասել», իսկ որդին ոչ մի կերպ չի կարող հրաժարվել խաղի դիտումից, նա «ավելի երկար է սպասել»:

Ի՞նչն է այս պատմության մեջ ստեղծում կոնֆլիկտային իրավիճակ և հանգեցնում «կրքերի թեժացման»: Ակնհայտ է, որ պատճառը ծնողի և երեխայի շահերի բախումն է, ինչը վեճի տեղիք է տալիս: Նկատենք, որ նման դեպքերում մի կողմի ցանկության բավարարումը նշանակում է մյուսի շահերի ոտնահարում և առաջացնում է ուժեղ բացասական էմոցիաներ՝ գրգռվածություն, վրդովմունք, զայրույթ: Ի՞նչ անել նման դեպքերում:

Չռչակավոր հոգեբան Յու. Բ. Գիպենրեյթերը երեխաների և ծնողների կոնֆլիկտների լուծման երկու ոչ կառուցողական եղանակներ միավորում է «հաղթում է միայն մեկը» հայեցակարգի ներքո:

Դրանցից առաջինը կարելի է անվանել «հաղթում է միայն ծնողը»: Ծնողները, ովքեր հակված են գործի դնել առաջին մեթոդը, կարծում են, որ անհրաժեշտ է հաղթել երեխային, կոտրել նրա դիմադրությունը, քանի որ նրանց պատկերացմամբ՝ եթե երեխային ազատություն տրվի, նա «կնստի իրենց գլխին», «կանի այն, ինչ

խելքին փչում է»: Մինչդեռ, չգիտակցելով հետևանքները, այդպիսով նրանք երեխային ցույց են տալիս վարքագծի կասկածելի օրինակ՝ «միշտ կարելի է հասնել ուզածիդ, անկախ ուրիշի ցանկություններից», իսկ երեխաները շատ զգայուն են իրենց ծնողների բարքերի նկատմամբ և ընդօրինակում են նրանց վաղ մանկությունից: Այսպիսով, այն ընտանիքներում, որտեղ օգտագործվում են ավտորիտար, ուժային մեթոդներ, երեխաները արագ սովորում են նույնն անել: Ավելի ուշ նրանք «յուրացրած դասը վերադարձնում են մեծերին», և ահա, ծնվում են նոր կոնֆլիկտներ:

Այս մեթոդի մեկ այլ տարբերակ էլ նրբանկատորեն, բայց համառորեն պահանջել է, որ երեխան կատարի ծնողի ցանկությունը: Հաճախ դա ուղեկցվում է բացատրություններով, որոնց հետ երեխան ի վերջո համաձայնում է: Սակայն եթե նման ճնշումը ծնողների մշտական մարտավարությունն է, որի օգնությամբ նրանք միշտ հասնում են իրենց ցանկություններին, ապա երեխան սովորում է մեկ այլ կանոն, այն է՝ «իմ անձնական շահերը, ցանկությունները, կարիքները հաշվի չեն առնվում, մինևնույն է անելու եմ այն, ինչ ծնողներս են ուզում կամ պահանջում»:

Որոշ ընտանիքներում դա շարունակվում է տարիներով, իսկ երեխաները անընդհատ պարտվում են: Որպես կանոն, երեխան մեծանում է կա՛մ ագրեսիվ, կա՛մ չափից դուրս պասիվ: Բայց երկու դեպքում էլ կուտակում է զայրույթ ու դժգոհություն, իսկ հարաբերությունները ծնողների հետ չի կարելի անվանել մտերիմ ու վստահության վրա հիմնված:

Ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտը լուծելու երկրորդ ոչ կառուցողական ճանապարհը «հաղթում է միայն երեխան» կոնցեպցիան է: Այս ճանապարհով գնում են այն ծնողները, ովքեր կա՛մ վախենում են կոնֆլիկտներից («խաղաղություն ամեն գնով»), կա՛մ պատրաստ են անընդհատ զոհաբերել իրենց «երեխայի բարօրության համար», կա՛մ երկուսն էլ: Այս դեպքերում երեխաները մեծանում են եսասեր, սովոր չեն կարգուկանոնի, չեն կարողանում ինքնակազմակերպվել:

Ընտանեկան «համընդհանուր փոխզիջման» պայմաններում այս ամենը կարող է այնքան էլ նկատելի չլինել, բայց բավական է երեխան դուրս գա տան դռնից և միանա ինչ-որ ընդհանուր գործի, նա սկսում է մեծ դժվարություններ ապրել: Դպրոցում, աշխատավայրում, ընկերական կամ ցանկացած այլ միջավայրում ոչ ոք չի ցանկանում անձնատուր լինել նրանց:

Նման ընտանիքում ծնողները խուլ դժգոհություն են կուտակում սեփական երեխայի և իրենց իսկ ճակատագրի նկատմամբ: Ծերության ժամանակ նման

«հավերժ զիջող» ծնողները հաճախ հայտնվում են միայնակ և լքված կարգավիճակում: Եվ միայն դրանից հետո են նրանց աչքերը բացվում. նրանք չեն կարողանում ներել իրենց փափկության, ինքնամոռաց սվիրման և անպատասխան անձնատուր լինելու համար:

Այսպես, պետք է ընտրել կոնֆլիկտները լուծելու կառուցողական մեթոդը, որի գաղափարախոսությունը հետևյալն է. «հաղթում են երկու կողմերն էլ՝ և՛ ծնողը, և՛ երեխան»: Այս ճանապարհով կոնֆլիկտների լուծման ալգորիթմը ներառում է մի քանի քայլ.

Առաջին քայլը կոնֆլիկտային իրավիճակի պարզաբանումն է: Նախ ծնողը լսում է երեխային և բացահայտում է, թե որն է նրա խնդիրը, ինչ է նա ուզում կամ ինչ չի ուզում, ինչ է նրա պետք կամ ինչն է կարևոր և այլն: Դա արվում է ակտիվ լսելու ձևով: Այսինքն՝ անպայման բարձրաձայնվում է երեխայի ցանկությունը, կարիքը կամ դժվարությունը: Դրանից հետո ծնողը խոսում է սեփական ցանկության կամ խնդրի մասին, բայց ոչ թե «Զգիտե՛ս, որ ամեն օր դիտում եմ» տրամադրվածությամբ, այլ փոխարենը «Գիտե՛ս, ես իսկապես անհամբեր սպասում էի այս սերիալին» մոտեցմամբ:

Եվս մեկ անգամ ընդգծենք, որ պետք է սկսել երեխային լսելուց: Երբ նա համոզվի, որ դուք լսում եք իր խնդիրը, նա շատ ավելի պատրաստակամ կլինի լսելու ձերը և կողջունի համատեղ լուծում գտնելու նպատակը:

Երկրորդ քայլը առաջարկների հավաքագրումն է: Այս փուլը սկսվում է «Ինչպե՞ս վարվենք» կամ «Ի՞նչ կարող ենք մտածել» հարցերով, որից հետո պետք է անպայման սպասել և հնարավորություն տալ երեխային առաջինը լուծում առաջարկելու, և նոր միայն առաջարկել սեփական տարբերակները:

Ընդ որում, ոչ մի, նույնիսկ ձեր տեսանկյունից ամենաաբսուրդ թվացող առաջարկը տեղում չի մերժվում: Սկզբում առաջարկները պարզապես հավաքվում են «զամբյուղի մեջ»: Եթե առաջարկները շատ են, դրանք կարելի է գրել թղթի վրա:

Երրորդ քայլը կոնֆլիկտի կարգավորման առաջարկների գնահատումն է և առավել ընդունելի ընտրությունը: Այս փուլում տեղի է ունենում առաջարկների համատեղ քննարկում: «Կողմերն» այս պահին արդեն գիտեն միմյանց շահերը, իսկ նախորդ քայլերն արդեն օգնել են փոխադարձ հարգանքի մթնոլորտ ստեղծել: Երբ քննարկմանը ներգրավված են մի քանի կողմ, ամենաընդունելին համարվում է այն առաջարկը, որը հարմար է մեծամասնությանը:

Չորրորդ քայլում կատարվում է կայացված որոշման մանրամասնեցում և գործողությունների հաջորդականության սահմանում:

Եզրափակելով հարկ է նշել, որ այս մեթոդը ոչ մեկի չի թողնում պարտության զգացումով և թույլ է տալիս կոնֆլիկտը լուծել առանց բացասական հոգեբանական հետևանքների:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը լավագույն և գլխավոր մանկավարժական հաստատությունն է, որը դաստիարակում է ոչ թե խոսքով, այլ կենդանի օրինակներով: Ընտանիքում բնական ուսուցումը չի կարող փոխարինվել դպրոցական արհեստական կրթությամբ: Անհատի զարգացման մեջ ընտանեկան բնական դաստիարակությունը առանցքն է, իսկ դպրոցը միայն միջուկի կեղևն է: Բայց այնտեղ, որտեղ բունն ինքնին անառողջ է և թույլ, պատվաստված բողբոջները չորանում են և մարում: Իսկ ընտանեկան կյանքում և դաստիարակության մեջ սերն է գլխավորը, և իրական մարդասիրությունն ու ամենավեհ անձնային որակները արտահայտվում են սիրո մեջ:

Ընտանիքում տարբեր համատեղ զբաղմունքները, հատկապես խաղերը, ամրապնդում են երեխայի և ծնողների հարաբերությունները: Սա հաղորդակցություն է, որը բերում է հաճույք և ուրախություն: Երեխաների հետ ծնողների խաղալը, նույնիսկ մրցակցային խաղերում, մեծապես նպաստում է ընտանիքի անդամների միջև հարաբերությունների օպտիմալացմանը: Բայց պետք է հիշել, որ խաղերը պետք է բնորոշ լինեն տարիքին: Չազվադեպ չեն դեպքերը, երբ, օրինակ, հայրը չափն անցնում է երեխայի հանդեպ իր խաղային ծաղրական վերաբերմունքի մեջ: Դրանով նա կարող է սպառել երեխայի համբերությունը և առաջացնել ցավոտ արձագանք նման վերաբերմունքի նկատմամբ:

Պատանեկության և դեռահասության մասին ծնողները մեծամասամբ քիչ բան գիտեն, մինչդեռ սրանք ամենաբարդ և պայթյունազգային շրջաններն են, ու հենց այս տարիքում են հեշտ սխալվում, սխալ ճանապարհով գնում: Չափազանց բարդ է բալանսավորել երեխային առանձնանալու հնարավորություն տալը և միևնույն ժամանակ նրանց գործողությունների համար պատասխանատու լինելը: Խիստ անհրաժեշտ է, որ տանը տիրի փոխվստահության և փոխօգնության մթնոլորտ, և դրա ձևավորման համար կարևոր է ընտանիքի բոլոր անդամների մասնակցությունը:

Գործնականում լինում են դեռահասներ, որոնք դառնանում են բոլոր մեծահասակների վրա, և որոնց մոտ նկատվում է շփման և փոխադարձ վստահության իսպառ կորուստ: Չոգեբանից պահանջվում են մեծ ջանքեր, որպեսզի դեռահասը սովորի կապ հաստատել ոչ միայն մեծերի, այլև երեխաների հետ:

Բախվելով այնպիսի խնդրի, ինչպիսին է դեռահասի և ծնողների` միմյանց չհասկանալը` հաճախ ծնողները կարծում են, որ որպեսզի երեխաները չշեղվեն ճիշտ

ճանապարհից և չսխալվեն, նրանք պետք է վախենան իրենց ծնողներից, մինչդեռ պետք է հասկանալ, որ անհնար է գործել հարկադրանքի և ուժի դիրքերից, քանի որ այդպիսով հնարավոր է վիրավորել երեխայի հասունության զգացումը: Չենց այս զգացումով է բացատրվում դեռահասների ցավոտ խոցելիությունը, նրանց ցանկությունը ամեն գնով պաշտպանելու հարգանքի իրենց իրավունքը, ապացուցելու, որ նրանք այլևս երեխաներ չեն: Պետք է հիշել, որ նրանց տարիքում արդիական են նաև հասակակիցների հետ շփվելու, ընկերներ ունենալու, թիմում արժանի տեղ զբաղեցնելու պահանջմունքները:

Ցանկացած կոնֆլիկտային իրավիճակում անհրաժեշտ է ուշադիր վերլուծել դիմացինի զգացմունքները և ցանկությունները: Կողմերի միջև բաց և կառուցողական երկխոսությունը կոնֆլիկտի արդյունավետ կարգավորման հիմնական պայմանն է: Գլխավորը մյուս կողմին չենդացնելն ու չնվաստացնելն է: Չարկավոր է խուսափել սպառնալիքներից, ստերից, մյուս կողմին մանիպուլյացիայի ենթարկելու փորձերից, քանի որ այդ գործողությունները թելադրված են դիմացինին գերազանցելու, այլ ոչ թե փոխադարձ համաձայնության հասնելու ցանկությամբ:

Չափազանց կարևոր է փոխվստահության և համագործակցության մթնոլորտի ձևավորումը: Իսնդիրն ավելի հաջող է լուծվում, եթե երկու կողմերն էլ շահագրգռված են ինչ-որ ընդհանուր արդյունքի հասնելու մեջ և խրախուսում են համագործակցությունը:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, կոնֆլիկտների կանխարգելումը ոչ պակաս կարևոր է, քան դրանք կառուցողականորեն լուծելու ունակությունը: Ակնհայտ է, որ որքան շուտ հայտնաբերվի սոցիալական փոխազդեցության խնդրահարույց իրավիճակը, այնքան քիչ ջանքեր պետք կլինի գործադրել այն լուծելու համար:

Գոյություն չունեն ընտանիքներ, որտեղ կոնֆլիկտներ չեն լինում, բայց որոշ ընտանիքներում դրանք ոչ միայն արդյունավետ լուծվում են՝ չվնասելով կոնֆլիկտի կողմերին, այլ նաև օգնում են ամրապնդել փոխըմբռնումը: Իսկ որոշ ընտանիքներում դրանք վերածվում են «շարունակական պատերազմի», որում հաղթող չկա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ЛеШан Э. Когда ваш ребенок сводит вас с ума. - М., Педагогика, 1990г.
2. Изучение основ конфликтологии в курсе педагогики // Педагогика как наука и как учебный предмет: Тез. докл. междунар. науч.-практ. конф. 4.1. Тула: Изд-во Тул. гос. пед. ун-та, 2000г.
3. Конфликты в подростковых коллективах средней школы // Образование на рубеже тысячелетий / Материалы Всероссийской научной заочной конференции, - Вып.1. Тверь: ТГТУ, ЧуДо, 2000г.
4. А. С. Чернышев. Практикум по решению конфликтных педагогических ситуаций - М: Педагогическое общество России, 1999г.
5. Природа конфликта с точки зрения психологии окружающей среды // Теоретические и прикладные проблемы психологии: Материалы научной конференции / Под общей редакцией профессора В. П. Озерова. -Ставрополь, 2001г.
6. Модель процесса предупреждения и разрешения конфликтов в подростковом коллективе средней школы // Образование и наука в третьем тысячелетии: Сборник материалов к четвертой международной научно-теоретической конференции. Часть 1 / Под ред. В.И.Степанова. Барнаул: Изд-во Алт. ун-та, 2002г.
7. Проблема культуры конфликта в современном обществе // Философия образования и реформа современной школы. Материалы городской научно-практической конференции / Комитет по образованию и науке администрации г.Перми, «Центр развития образования им. С.О.Ветлугина» г. Перми, - Пермь, 2002г.
8. Уровни конфликтности старших подростков // Вестник Пермского государственного педагогического университета. Серия «Педагогика». Выпуск 1/2002г.
9. Р. Кэмпбелл "Как справляться с гневом ребенка", Санкт-Петербург, издательство "Мирт", 1999г.
10. Р.В. Овчаров "Справочная книга школьного психолога", М.: "Просвещение", "Учебная литература", 1996г.
11. Л.А.Кулик, Н.И.Берестов «Семейное воспитание» М., Просвящение 1990г.